

ՄԼՔԷԻ ԱԵԽՏԱՐԱՆԻ ԳՅՈՒՆ = 932ԻՆ ԳՐՈՒԸԾ

Հ. Վ. Հացունիի յօդուածը՝ «ՄԼՔԷԻ աւետարանին թուականը» (1939 Բաղմալէս, էջ 109—112), առիթ տուաւ մեզ անոր գրութեան տարին որոնելու եւ ճշգրտելու, որչափ հնարաւոր էր Մխիթարեան Հայրերու յօդուածներուն եւ տեղեկութիւններուն վրայ հիմնուելով (Հ. Բ. Սարգիսեան, Բաղմ. 1909, 433. 1911, 53. եւ Յուլ. Զեռ., Ա., 380: — Հ. Վ. Հացունի Բաղմ. 1910, 481. 1911, 128: — Հ. Ղ. Ալիշան եւ Հ. Մ. Պոտուրեան «Զարդանկարք Աւետարանին ՄԼՔԷ Թագուհւոյն». Ս. Ղազար 1902), քանի բախտը չենք ունեցած զայն մօտէն զննելու, եւ քանի անոր գրութեան յիշատակարանին լուսանկարը հրատարակ չէ հանուած տակաւին:

Հ. Վ. Հացունիի վերոյիշեալ յօդուածը համադրութիւնն ըլլալով այս նիւթիս շուրջ գրուածներուն, մեր քննութիւններուն մօտաւոր առարկան պիտի ընենք: Այս՝ շարագրուած է իբր պատասխան ոչ շատ տարիներ առաջ Մխիթարի մէջ (1936, Սեպտ., 274—275) Ուս. Աղոնցի այն յօդուածին, ուր Ուսուցչապետը ՄԼՔԷԻ աւետարանին լակոնական՝ «ՆԼԶ քերք — ՅՄԱ Թ. — Արաց ԻԼ Բ — Արեգ Զ Ե» գրութեան յիշատակարանին մէջ գտնուող Բ. եւ Ե. ր օր նշանակող գիր ընդունելով, կը հասնէր եզրակացութեան, թէ յիշատակարանին ՅՄԱ. ր պէտք է փոխել ՅՄԱ. Ի, քանի որ Ծ գրին շուրջ տարածայն են Մխիթ. Հայրերը, եւ մանաւանդ որ ՅՄԱ. տարւոյն ընթացքին Արաց ԻԼ՝ երկուշարթի եւ Արեգ Զ՝ հինգշարթի չէին գար, մինչ երկրորդին մէջ անոնք ստուգիւ երկուշարթի եւ հինգշարթի էին: Ուսուցչապետը կը խնդրէր Մխիթարեաններէն վերատին քննել եւ զննել յիշատակարանը, եւ իրենց հաւանութիւնը տալ ՅՄԱ. Իին, որով հայ հնագոյն ձեռագրի պատիւը այլեւս Լազարեան ձեռագրանի աւետարանէն կ'անցնէր ՄԼՔԷԻ աւետարանին, որ այսպէս 25 տարի աւելի հին կ'ըլլար քան առաջինը:

Հ. Վ. Հացունի Աղոնցի խնդրանքը կատարելով՝ 1939ի Բաղմ. Ի մէջ կը ներկայացնէ իր քննութեան արդիւնքը: Մեծ. Հայրը կ'ըսէ. ՄԼՔԷԻ աւետարանին կարեւոր յիշատակարանները երեք են, որոնց առաջինին մէջ եկող Յ և կ'ապացուցանէ թէ պահպանակ

է, իսկ երկրորդին, ՇԺԵ թուականին տեղ նախապէս գտնուած հայկ. տարին՝ կը համարի աւետարանիս ՄԼՔԷ Թագուհւոյն կողմէ Վարդայ Ս. Աստուածածին եկեղեցւոյն նուիրման թուականը: Երրորդ յիշատակարանը՝ լակոնականը — դուրս հանելով «ՆԼԶ Թերթ», որ աւետարանի թերթերուն թիւը կը նշանակէ համաձայն իրականին — իրաւացիօրէն, ինչպէս առհասարակ Մխիթ. Հայրերը, աւետարանիս գրութեան թուական կ'ընդունի, հակառակ Հ. Սարգիսեանի, որ նուիրման յիշատակարան համարեցաւ, որովհետեւ ո՛չ նուիրատու եւ ո՛չ նուիրատու նշանակուած է հոն, դարձեալ՝ որովհետեւ նուիրման յատուկ յիշատակարան կայ, իսկ երրորդ՝ նոյն տարւոյն մէջ ըստ Արաց 28ի եւ Արեգ 6ի կրկին նուիրում անտեղի ըլլալ կը թուի: Ապա լակոնական յիշատակարանիս Ծ. Ի մասին կը յաւելու. «մեւնը թէպէտ մասամբ ջնջուած, բայց յատկօրէն ցոյց կու տայ իւր բոլորգրի ձեւը՝ դէպ ալ կարկառած կոտորվը, դալարուն բնովն եւ օղակաձեւ ձևով»:

Իր յօդուածին շարունակութեան մէջ, Հ. Վ. Հացունի Աղոնցի եզրակացութիւնը ապարժէք ընելու դիտումով՝ կը փորձէ — Ստեփանոսի ծանօթ յիշատակարանը ելակէս առնելով — «Մխիթարի մէջ եղած հիմնական հաշիւները խախտել ու սրբազրել: Վերջապէս կ'անցնի ինչ ինչ տուեալներով ցուցնելու, թէ Ուսուցչապետին ենթադրած 862ը կարելի չէ աւետարանիս գրութեան տարին համարել ու կը յարէ՝ «եզրակացնելով, ՄԼՔԷԻ աւետարանին գրութեան տարի ընդունելու ենք 902ը: Իսկ Բ եւ Ե տառերուն ներքեւ եօթնակի օրեր տեսնելու չենք, այլ ժամեր»:

Մենք ընդհակառակն պիտի համարձակինք փորձել նախ Հ. Վ. Հացունիի գրեթէ բոլոր հաշիւները — որոնք այդ իր եզրակացութեան ամէնէն զերակչիւ ապացոյցներն են — սրբազրել, ապա անցնիլ վայրկեան մը այն հարցին թէ գրութեան յիշատակարանին ՅՄԱ. ր կարելի չէ՞ փոխել ՅՄԱ. Ին գատ ուրիշ թուականի մը, որ կուռն ունենայ ոչ միայն յիշատակարանիս Բ. ր եւ Ե. ր այլ նաեւ խնդրոյ նիւթ եղող «Ծ», պատմութիւնը եւ հնագրութիւնը:

Կարող էինք ուրիշ հիմերու վրայ յեցած սրբազրել հաշիւները, սակայն աւելի լաւ համարեցանք հիմ առնել Բաղմ. Ի յօդուածա-

դրին յիշատակարանը, որ բերուած է իբր օրինակ, ցոյց տալու թէ «մեր մատենագիրք հայ եւ յոյն թուականներու զուգարութեան մէջ շատ կը հեռանան իրարմէ եւ իրականէն»: Նոյն օրինակը՝ ինչպէս Մեծարդոյ Հօր, նոյնպէս մեզի ալ «վճռականօրէն պիտի նշատէ մեր հարցին լուծման»:

Ստեփանոս՝ Մաշտոց Կաթողիկոսի աշակերտը, ունի հետեւեալ յիշատակարանը. «Յամի... եւ Հայոց նոր տոմարիս ՅՈԲ (893) կատարեցի զնուաստ գրկունքս զայս՝ յառաջ քան զհինգ կաղանդին Ապրիլի, որ ԺԶ էր Հրոտից ամսոյ, ի մեծի հինգշարթին, ի վեցերորդ ժամու» (1939 Բաղմ., էջ 110): Յիշատակարանիս թուականները անհամաձայն ըլլալէ շատ հեռու են:

Հետեւինք քայլ առ քայլ Հ. Հացունիի յօդուածին, որ կը փորձէ հակառակը ջատագովել:

«Ունինք, կ'ըսէ, հյլ. 342 կամ քրիստ. 893 յայտնի տարին»:

Ունինք հյլ. ՅՈԲ տարին, որ կը սկսի 893ի մէջ. բայց թէ ո՞ր ամիսը եւ օրը այդ Ստեփանոսի յիշատակարանին մնացեալ մասերը պիտի որոշեն¹:

«Նոյնպէս «Հրոտից 16», կը շարունակէ Հ. Հացունի, որմէ մինչեւ հայ տարեմուտը (Նաւասարդ 1) կան 19 օր»:

Հրոտից 16ը ՅՈԲ տարւոյն 12րդ ամսոյն 16րդ օրն է. Ստեփանոս՝ ՅՈԲ. Ի Հրոտիցի մասին կը խօսի եւ այս ամսոյս 16էն մինչեւ հայ նոր տարեմուտը — ուրեմն ՅՈԳ. Ի տարեմուտը — վերջինս հաշուի չառնելով կան 19 օր (14 Հրոտից + 5 Աւելեաց):

«Իսկ «յառաջ քան զհինգ կաղանդին Ապրիլի», կը նշանակէ, կը յարէ Մեծ. Հայրը,

¹ Հոս անցողակի ըսնք թէ մօտաւորապէս կ'որր կրնայ սկսիլ ՅՈԲ տարին, որպէս զի հաշիւները ընթերցողներուն աւելի պայծառ երեւան: Հայկական տարին երբեք նահանջ չ'ըլլալուն՝ քրիստոնէականին հետ չի համընթանար, այլ ամէն շորս տարի մէկ օր կը շահի եւ այս պատճառաւ կը շարժի դէպ ի ետ քրիստ. թուականին վրայ. այսինքն եթէ հայկական տարին որչա՞ թուականի մը մէջ որ նահանջ է, օր. համար Յուլ. նուար 5ին սկսի, յաջորդ հյլ. տարեմուտը կու գայ Յունուար 4ին, որովհետեւ մինչեւ այդ օրը անցած Յունուար արդէն 365 օր եւ հյլ. տարին լրացած կ'ըլլայ: Արդ մեր հայկական թուականին սկզբնաւորութիւնէն մինչեւ ՅՈԲ (893) անցած են գրեթէ երեքուկէս դար, որոնց մէջ եկած են շուրջ 90 նահանջ տարիներ. կը հետեւի թէ ՅՈԲ. Ին հայ տարեմուտը երեք ամիս (90 օր) աւելի առաջ կը սկսէր քան ինչ օր կը սկսէր երեքուկէս դար առաջ: Հայ թուականը իր սկզբնաւորութեան՝ մօտ Յուլիան կէսին ունէր իր տարեմուտը: Երեքուկէս դար վերջ՝ ՅՈԲ հայկական տարւոյն նաւասարդ մէկը եկած պէտք է ըլլայ ուրեմն քրիստ. 893 տարւոյն Ապրիլին:

28 Մարտի, որոյ վրայ բարդելով նոյն 19ը, հայ տարեմուտն 893ին կը հանդիպի Ապրիլի 16ին՝ ըստ յունական տոմարին»:

«Յառաջ քան զհինգ կաղանդին ապրիլի» կը նշանակէ Մարտ 28, որուն վրայ դուամարելով 20 — ո՛չ թէ 19, այլապէս կը հասնինք ՅՈԲ. Ի Աւելեաց 5ին² — կը գտնենք հայ ՅՈԳ. Թուին տարեմուտը 894ի Ապրիլ 17ին — ո՛չ թէ 893ի Ապրիլ 16ին — դ. ըստ յուլիական տոմարին: Զէ՞ որ առած էինք ՅՈԲ եւ 893. արդ՝ եթէ ՅՈԲ. Ի Հրոտից 16էն մեկնինք, ո՞ր տարեմուտին կը հասնինք, ՅՈԲ. Ի թէ ՅՈԳ. Ի... այս տարեմուտը ո՞ր տարւոյն

² Երկու թուականներու միջեւ եղած օրերու քանակը հաշուելու ժամանակ, պէտք է մտադիր ըլլալ, թէ արդե՞օր առաջին եւ վերջին օրերը հաշուի մէջ առնուած են թէ ոչ եւ անոր համաձայն եօթնակի օրերը փոխելու է: Հ. Վ. Հացունի 16 Հրոտիցէ նաւասարդ 1 անցած միջոցին մէկ օր կը կանխէ հայ տարեմուտը, թերեւս մտադիր ըլլալով մեր սկիսած կէտին:

Թէեւ Աղոնց թուականէ մը ուրիշ թուական անցած առնել, եօթնակի օրերը ճիշդ հանած է, բայց կարծենք յանուպն պիտի չըլլայ ըսել թէ Ուսուցչապետը կամ բոլորովին գիտակից չէր այդ հաշիւներուն, եւ կամ ճիշդ արդիւնքի հազած է որոշ տախտակներու վրայէն:

1936ի Մխիթարի մէջ գրուած կայ «յունուարի 1եց մինչեւ հոկտեմբեր 9 = 281 օր է, կամ 40 լրիւ շաբաթ եւ մի օր: Ուրբաթով սկսուած շաբաթները (եօթնակները) կը վերջանան ուրբաթով եւ յաջորդող մի օր (Հոկտ. 9) կը դայ՝ շաբաթ» (1936, Թիւ 9, էջ 275):

Ճիշդ է թէ ուրբաթով սկսող տարւոյ մը մէջ — որ նահանջ չէ — Հոկտ. 9ը շաբաթ օր մը կու գայ. սակայն ճիշդ չէ թէ մինչեւ Հոկտ. 9, վերջինս ալ հաշուի մէջ առնելով, կան 281 օր, ինչպէս նաեւ ճիշդ չէ «ուրբաթով սկսուած եօթնակները կը վերջանան ուրբաթով»: Աղոնց զերար չէր քաջանող երկու սխալներ գործելով ճիշդ արդիւնքի կը հասնի:

Եթէ ան անգրագետնար թէ Յունուար 1էն — Հոկտ. 9, վերջինս ալ դուամարտ, կայ 282 օր, պիտի արամարանէր «ուրբաթով սկսուած շաբաթները կը վերջանան ուրբաթով: Հաշուած ուրբաթից երկու օր (282 օր = 40 եօթ. + 2 օր), — Հոկտ. 9 — կը գայ՝ կիրակի» այս սակայն իրականութեան համապատասխան պիտի չըլլար: Եւ կամ եթէ անգրագետնար թէ ուրբաթով սկսած եօթնակները հինգշարթով կը վերջանան, ըստ իրականին, պիտի արամարանէր «ուրբաթով սկսուած շաբաթները կը վերջանան հինգշարթով եւ յաջորդող մի օր (281 օր = 40 եօթ. + 1 օր) — Հոկտ. 9 — կը գայ՝ ուրբաթ». այս եւս սխալ պիտի ըլլար: Պրոֆ. ր իր հաշիւներուն մէջ նախ մէկ օր դուար կը ձգէ — Հոկտ. 9 — ապա մէկ օր աւելի կը հաշուէ «ուրբաթով սկսուած շաբաթները ուրբաթով» փոխանակ «հինգշարթով» կը վերջանան ըսելով:

Մերք մեր հաշիւներուն մէջ առած ենք երկու թուականներու միջեւ գտնուած օրերը + 1 օր, թուականական հանուածի ձևով:

Ուս. Աղոնցի օրինակին մէջ մենք պիտի արամարանէինք. Յուն. 1էն մինչեւ Հոկտ. 9, երկուքէն մին արտարտելով, կայ 281 օր (40 եօթ. + 1 օր): Եթէ Յուն. 1 հաշուի մէջ առնենք, 40րդ եօթնակին վերջին օրը հինգ. յաջորդ օրը, 281րդ օրը՝ Հոկտ. 8 ուրբաթ կը հանդիպի. ըսել է թէ Հոկտ. 9 շաբաթ է: Եւ կամ եթէ Յուն. 1ի տեղ Հոկտ. 9 հաշուի մէջ առնենք, 40 եօթնակները + 1 օր կը սկսին Յուն. 2էն՝ այդ է շաբաթ օրէ մը, եւ կը վերջանան ուրբաթով մը՝ Հոկտ. 8ով. իսկ 281րդ օրը՝ Հոկտ. 9, կու գայ շաբաթ:

մէջ կու գայ, 893ի^թ թէ 894ի...: Եթէ հյի. ՅՈՒ.ի Նաւասարդ 1ը 893ի Յունուար 1ին սկսէր, նոյն տարւոյն Հրոտից 16էն մեկնելով՝ դանուած նոր տարեմուտը պիտի կուգուէր «ՅՈՒ» եւ պիտի հանդիպէր — 893 նահանջ ըլլալուն — 894 Յունուար 1ին:

Ստեփանոսի յիշատակարանով տեսնելով թէ հայ. ՅՈՒ տարեմուտը կու գայ 894 Ապրիլ 17ին. ուրեմն 894 Ապրիլ 16ին կը վերջանայ ՅՈՒ հյի. տարին, որ սկսած է 365 օր առաջ, այդ է՝ 893ի Ապրիլ 17ին: 893 Ապրիլ 17էն մինչեւ 894 Ապրիլ 16՝ հայի. ՅՈՒ տարին էր շրջանը կը բոլորէ. ա՛յս շրջանիս մէջ կ'իջնայ 16 Հրոտիցն ալ:

«Համեմատելով զայս Աղոնցի ենթադրած 862 տարւոյն հետ, աստի մինչեւ Ստեփանոսի 893ը կան 31 տարի, որոց բովանդակած նահանջներուն 7 օրերն հանելով 862ի Ապրիլ 25էն (Նաւասարդի 1), 893ի տարեգլուխը պատահելու էր Ապրիլ 18ին՝ ըստ Գրիգորեան տոմարին եւ 13ին՝ ըստ Յուլեանին. եւ որոց ոչ մեկուն սակայն համաձայն չէ Ստեփանոսի 16ը» (Բաղմ., էջ 111):

Տեսնելով վերը, թէ Հ. Հացունի մտադրած էր ցուցնել Ստեփանոսի յիշատակարանին հայ եւ յոյն թուականներուն զուգարութեան մէջ անհամաձայնութիւն: Այս պարբերութեան մէջ — ուր կայ նաեւ անշուշտ ակամայ վրիպած սխալ հաշիւ՝ ինչպէս պիտի տեսնենք — Մեծ. Հայրը պէտք էր արդէն Ստեփ.ի սխալը երեւան հաներ եւ այն ուղղակի փաստելով. սակայն մեր կարծիքով հոն կ'անտեսուի այդ. ըսենք թէ ինչու: Ստեփանոսի յիշատակարանը որպէս զի իմացուէր թէ անհամաձայն է, պէտք է ցուցուէր, թէ հյի. ՅՈՒ տարւոյն մէջ Հրոտից 16 աւագ հինգշաբթին «յառաջ քան զհինգ կաղանդին Ապրիլի (= 28 Մարտ)» չի գար: Այս մասին եւ ոչ խօսք կը բանայ Հ. Հացունի: Գարձեալ ինչո՞ւ կը համեմատուի 893 Ապրիլ 16ը Լիցմանի (Աղոնցի) 862ի հետ, որուն ցուցակով, ըստ Բաղմ.ի պատուարժան յօդուածագրին, հայ թուականներուն խնդիրը չի լուծուիր:

Այդ պարբերութեան մէջ հաշուի սխալն է հետեւեալը:

Աղոնցի ՅՈՒ.էն, որ 25 Ապրիլին կը սկսի, մինչեւ ՅՈՒ Նաւասարդ 1 կան 31 տարի, որոնց ընթացքին սակայն կան 8, ո՛չ թէ 7 նահանջ. անճիշդ եւ շատ սկզբնական պիտի ըլլար ամէն անգամ 31ը 4ով բաժնելով՝ ամէն 31 յաջորդական տարիներու ըն-

թացքին եկած նահանջները դանել ուզել. որովհետեւ անոնք կրնան 7 կամ 8 ըլլալ. հոս 8 են՝ 864, 868, 872, 876, 880, 884, 888, 892: Արդ 862ի մէջ եկող հյի. ՅՈՒ թուականէն մեկնելով, որ 25 Ապրիլին կը սկսի, դանենք 893ի մէջ եկող ՅՈՒ.ի Նաւասարդ մէկը: ՅՈՒ.ի Նաւասարդը հարկ է որ ՅՈՒ.ի Նաւասարդէն 8 օր աւելի առաջ գայ, քանի որ հյի. տարին 365 օր ունի եւ 8 նահանջ տարիներէն 8 օր կը շահի. ուրեմն կ'ունենանք ՅՈՒ Նաւասարդ 1 = Ապրիլ 25 — 8 = 17 Ապրիլ զշ. եւ այն՝ ըստ յուլիական տոմարին. որովհետեւ յուլիական թուականէն ճամբայ ելանք եւ անոր մէջ ենք: Իսկ եթէ Գրիգորեան (1582ի Հոկտ. 4/15 սկսող) տոմարական օրէնքներուն համաձայն ուզենք զէպ ի եա երթալ — որ քիչ մը տարօրինակ եւ անպատեհ կ'երեւայ մեզ — կ'ունենանք՝ յուլ. 893 Ապր. 17 = զրիդ. 893 Ապր. 21 — ո՛չ թէ 18 — Թ. դարու յուլիական եւ զրիգորեան տոմարներուն օրերու տարբերակն 4 — ո՛չ թէ 5 — ըլլալով:

դար	տարբերակ	դար	տարբերակ
800	4	1500	10
900	5	1600	10
1000	6	1700	11
1100	7	1800	12
1200	7	1900	13
1300	8	2000	13
1400	9	2100	14

Ուրեմն՝
Թէ՛ Ստեփանոսի յիշատակարանին, թէ՛ Աղոնցի ՅՈՒ.ին համաձայն ՅՈՒ.ը կը սկսի 893ի Ապրիլ 17ին: Բաղմ.ի մէջ նախ — փոխանակ 20 բարդելու — 19 բարդելով 893ի տարեմուտը մէկ օր աւելի առաջ կը դրուէր՝ 16 Ապրիլին, ապա 862էն մեկնելով փոխանակ 8՝ 7 նահանջ հանելով ան կը յետաձգուէր մէկ օրով:

Ըսենք հոս անցողակի թէ Բաղմ.ի մէջ եթէ այս հաշիւները ճիշդ կատարուէին եւ Ապրիլ 17ին դրուէր ՅՈՒ.ի տարեմուտը, այդ ուղիղ արդիւնքին պատճառը ո՛չ թէ Հ. Հացունի՛ Ստեփանոսի յիշատակարանին համաձայն հաշուելն պիտի ըլլար — որովհետեւ Ստեփանոսի համաձայն Հրոտից 16ը ՅՈՒ.ի եւ 894ի մէջ է, ո՛չ թէ ՅՈՒ.ի եւ 893ի մէջ — այլ լուի այն պատահարը թէ ՅՈՒ տարւոյն Նաւասարդ մէկն ալ կը սկսի Ապրիլ 17ին:

Մեծ. Հայրը յիշեալ պարբերութենէն վերջ կը դրէ «Հայ յիշատակագիրը կրնար ուրիշներու պէս սխալել — եթէ արդարեւ սխալած է հօդ — ...»: Ինչո՞ւ Ստեփանոսի յիշատակարանին հայ եւ յոյն թուականներու զուգարութեան մէջ ապացուցուելիք անհամաձայնութիւնը առկա կը ձգուի...:

Իր յօդուածին շարունակութեան մէջ, յարդ. բանասէրը կը հրաժարի Ստեփ.ի հոսոմ թուականէն եւ հիմ կ'առնէ լուի 893 տարին, Հրոտից 16 ու աւագ հինգշաբթին, առանց մտադիր ըլլալու թէ Ա. հրաժարելէ առաջ լաւ պիտի ըլլար ապացուցանել թէ ստուգի՞ւ հայ գրիչը սխալած է, որովհետեւ այդպէս Բ. երեւան պիտի ելլէր թէ հակասական չէ՞ ընդունել ՅՈՒ տարի մը, որ կը սկսի 893ի մէջ եւ ունի Հրոտից 16ն ալ նմանապէս 893ի մէջ, դարձեալ՝ թէ արդե՞օք 893ի մէջ Հրոտից 16ը աւագ հինգշաբթի է. ահա էական հարցեր, որոնք անտեսուած են:

Ա. Ստեփանոսի ճշգրտութեան ապացոյց: Անոր համաձայն Հրոտից 16ը աւագ հինգշաբթի է եւ կու գայ «յառաջ քան զհինգ կաղանդին Ապրիլի», այդ է Մարտ 28ին:

Տոմարական ստոյգ ամէն հաշիւներու համաձայն — որոնք հոս աւելորդ է առաջ բերել — յուլիական ինչպէս նաեւ հայի. Զատիկը 894ի մէջ Մարտ 31ին էր. կը հետեւի թէ երեք օր առաջ... (30, 29) 28ին էր... (չբթ, ուրբ.) հինգշաբթի, ստուգիւ 28 Մարտ եւ աւագ հինգշաբթի, որուն մասին կը խօսէր հայ գրիչը, որ քաջ տեղեակ էր այս դէպքին թէ՛ հայ թէ՛ հոսոմ թուին:

Հետեւե՞նք. 1. Հայ գրչագիրը այս յիշատակարանին մէջ ոչ միայն չէ սխալած, այլ ընդհակառակն իր ճշգրտութեամբ կրնայ հիմ ծառայել անդրադոյն հաշիւներու: Ստեփանոսի յիշատակարանին մնացեալ մասն աւելի եւս կ'ամրապնդէ իր ճշգրտութիւնը, միաժամանակ ցոյց տալով իր հմտութիւնը հոսոմ թուականներուն: Ան ունի՝ «Յամի... յորում ամի էր հոսոմ թուականն ՈՒՁ» (Թօփչեան, Զեռ. ցուց., էջ 43): Հոսոմոց թուականն է Հոսոմայ շինութեան թուականը (754—753 ն. ք. Գ.): 1000 տարի վերջ Հոսոմայ թուականը դարձեալ ծայրէն կը հաշուուի: Իրիստոսէ վերջ 248ին կ'իջնայ Հոսոմայ թուականութեան երկրորդ շրջանի առաջին տարին: Այս թուականը յուլիականին հետ կը համընթանայ, բայց իր տարեմուտը միշտ

Ապրիլ 21ին է: Գտնելու համար ՈՒՁ Հոսոմոց տարին հարկ է անոր վրայ դուստարել 247, ուստի կ'ունենանք 893, որուն Ապրիլի 21ին կը սկսի ՈՒՁ տարին եւ կը վերջանայ 894 Ապրիլ 20ին. այս միջոցին մէջ միայն Հրոտից 16 աւագ հինգշաբթին եկած է V Kal. Apr. որ է՝ Մարտ 28ին:

2. Այլադան ցուցակները, որոնց համաձայն ՅՈՒ էր շրջանը կը բոլորէ 893 Ապր. 17էն — 894 Ապր. 16 իրենց ստուգութեան ապացոյց մը եւս ունին՝ Ստեփանոսի յիշատակարանը:

Ուս. Աղոնցի հաշիւները ճիշդ ըլլալուն — որոնց պիտի անդրադառնանք — ճիշդ է նաեւ Լիցմանի ցուցակը ու հակառակ Հ. Հացունի կարծիքին սրբադրութեան կարօտ չէ, զէթ այն չափով որ Ուսուցչապետը օգտուած է: Այդ ցուցակը մեր աչքին առջեւ ըլլալուն՝ աւելին չենք կրնար արտայայտուել անոր մասին:

Մենք եւս Ստեփանոսի յիշատակարանը ուզելով մեր անդրադոյն հաշիւներուն հիմունքն ալ կը փորձուինք ուրիշ յիշատակարաններով վերաքննել անոր ճշգրտութիւնը:

Նախ դենք յիշատակարան մը, որ ՅՈՒ.էն միայն անգատիկ հյի. տարիով մը կ'անջրպետի: Հ. Ալիշանի «Սխական»ին մէջ կը կարդանք «Յամին յորում թուականն ՅՈՒ էր եւ Զատիկն ի Նաւ.ի Գ» (էջ 227): Ըսել է ՅՈՒ.ի, 895ին, Նաւասարդ 4ը կիրակի է: Այս թուականէս մինչեւ Ստեփանոսի 894ի մէջ եկող Հրոտից 16 կայ 55 եօթնեակ եւ 3 օր. կը հետեւի թէ արդարեւ 894ի մէջ եկող Հրոտից 16ը որ ՅՈՒ.ի վերջնութեւր ամսոյն մէջն է՝ է հինգշաբթի:

Ուրիշ յիշատակարան մը եւս ՅՈՒ.ի մօտաւոր. «Եւ կատարեալ Աշոտ զկեանս իւր՝ մեռաւ ի Վանտոսպ գաւառի ՅԻԳ. թուականութեանն Հայոց, յամսեանն հոսի, որ օր Զ էր ամսոյն, յաւուր հինգշաբթիով» (Թովմ. Արժրուհի, Պատմ., էջ 217, Ղուկասեան Թիֆլիս): Որուն համաձայն տուեալ ՅԻԳ.էն մինչեւ ՅՈՒ.ի Հրոտից 16ը կայ՝

ՅԻԳ Հոսի 6էն մինչեւ տարւոյն վերջը 330 օր ՅԻԳ տարեմուտէն մինչեւ ՅՈՒ.ի տարւոյն վերջը (365 × 18) 6570 օր
ՅՈՒ տարեմուտէն մինչեւ Հրոտից 16 (վերջինս չհաշուելով) 345 օր = 7245 օր, այդ է 135 եօթնեակ, որ զմեզ կը տանի ՅՈՒ Հրոտից 16ի մը որ հինգշաբթի է:

Ապացուցանելով որ Հրոտից 16՝ 894ի մէջ եւ. է անուղղակի ապացուցած կ'ըլլանք որ ՅՈՒՄ ստուգելու 893ի Ապր. 17ին կը սկսի, որովհետեւ այս շրջաններուս բաց ի 894ին միայն 922ին եւ 866ին թէ՛ «յառաջ քան զհինգ կաղանդին ապրիլի» եւ թէ՛ Հրոտից 16 կրնան ելլ. գալ: — Անտեղի է կարծենք ՅՈՒՄ տարին ուղիւ այդ թուերուն համաձայնցնել, ընդունելով որ ՅՈՒՄ սկսի 921ի եւ 865ի Ապրիլ 17ին:

Բայց տանք հոս ուղղակի ապացոյց մը ի նպաստ 893ի Ապր. 17ին սկսող ՅՈՒՄ.ին: «Սիրասկան» յիշատակագրութեան համաձայն ՅՈՒՄ-ի Նաւասարդ 4ը Չատիկ էր: Արդ 895ին Չատիկը Ապր. 20ին եկած էր. կը հետեւի թէ ՅՈՒՄ-ի Նաւասարդ 1ը Ապր. 17ին էր: Իսկ ՅՈՒՄ-ի տարեմուտը, որ 730 օր առաջ պատահած էր, նմանապէս 17 Ապրիլին, 893ի Ապրիլին եկած էր:

Ստեփանոսի յիշատակարանին ճշգրտութիւնը կրկին ու կրկին ստուգելէ վերջ, կրնանք անցնել քննելու 902ի եւ 862ի Արացներուն եւ Արեղներուն Բ. եւ Ե.ը, ուր պիտի գտնենք թէ՛

ա) ՅՄԱ.ի Արաց 28՝ շաբաթ է, Արեղ 6՝ երեքշաբթի: Եւ ո՛չ Հ. Հացունիի հաշուին համաձայն Արաց 28՝ երեքշաբթի, Արեղ 6՝ ուրբաթ:

ՅՈՒՄ տարւոյն Հրոտից 16էն մինչեւ ՅՄԱ. Հր. 16 կան 3285 օր. որ է 469 եօթնեակ + 2 օր. կ'ունենանք ըստ այսմ ՅՄԱ.ի Հրոտից 16ը շաբաթ. այս շաբաթէն ետ երթալով մինչեւ Արեղ 6 կան 18 եօթնեակ + 4 օր, ուստի՛ ան երեքշաբթի կու գայ. իսկ այս Արեղէն զէպ ի ետ Արաց 28ին հաշուելով — 5 եօթնեակ + 3 օր — կը հասնինք շաբաթ օր մը:

բ) Ազոնցի 862 թուականին Բ. եւ Ե. կու գան երկուշաբթի եւ հինգշաբթի, ոչ թէ դշ. եւ շաբաթ:

ՅՈՒՄ Հրոտից 16էն մինչեւ ՅՄԱ. Հր. 16 կան 31 տարի, եօթնեակի օրերը իրարմէ երեք օրով կը հեռանան, որով ՅՄԱ.ի Հր. 16ը կու գայ բշ.: Այս բշ.ն հիմ աննելով կ'ունենանք Արեղ 6ը — 4 օր տարբերակով — եւ. իսկ Արաց 28՝ Արեղ կուտան ստած — երեք օր տարբերակով — բշ.:

Սրանի մէջ 851ի եւ 922ի մասին եղած հաշիւները ճիշդ ըլլալով, աւելորդ համարեցանք հոս դարձեալ գտնենք ստուգելու:

Բ. Հ. Հացունիի ստած հիմք՝ 893, Հրոտից 16 աւագ հինգշաբթի հակասական թուական մըն է:

ա) Մենք հիմ ասինք ՅՈՒՄ Հրոտից 16 աւագ հինգշաբթին 894ի մէջ. Հ. Հացունի զայն ունի 893ի մէջ: Այս սակայն իրականութեան չհամապատասխանող թուական մըն է. 893ի Հրոտից 16ը հ.կ. ՅՈՒՄ երկղատիկ տարւոյն Հրոտից 16ն է, որով Ստեփանոսի ակնարկածը չէ:

բ) 893ի մէջ եկող Հրոտից 16ը եւ. չէ.

1. Փաստեցինք թէ Ստեփ.ի Հրոտից 16ը հինգշաբթի եւ 894ի մէջ է: Արդ այս թուէս մինչեւ 893ի Հրոտից 16ը կայ 52 եօթնեակ եւ 1 օր. կը հետեւի թէ 893ի Հրոտից 16ը դշ. է:

2. Սրտականի համաձայն ՅՈՒՄ-ի Նաւասարդ 4ը կ'երակի է. այս օրէս մինչեւ 893ի Հրոտից 16ը կայ 4 + 730 + 19 = 753 օր՝ 107 եօթնեակ եւ 4 օր, որ զմեզ կը տանի դշ.ի մը, ոչ թէ եւ.ի:

3. Թովմաս Արծրունի կ'ըսէ ՅՈՒՄ-ի Հոտի 6ը եւ. է. ըստ այսմ՝ ՅՈՒՄ + (ՅՈՒՄ-էն մինչեւ ՅՈՒՄ) + ՅՈՒՄ = 330 + (17 × 365) = 6205 + 345 = 6880 որ է 982 եօթնեակ եւ 6 օր. կ'ունենանք 893ի Հրոտից 16ը՝ դշ.:

Այս շրջաններուս Հրոտից 16ը եւ. է բաց ի ՅՈՒՄ-էն՝ ՅՈՒՄ-ին (887ին) եւ ՅՈՒՄ-ին (901ին):

գ) 893ի մէջ եկող Հրոտից 16ը աւագ շաբթուան մէջ չի գար.

1. Երկու յաջորդ տարիներու Չատիկներու ամսաթուերը չեն կրնար նոյն թուականին գալ, եւ ոչ ալ անմիջական յաջորդ կամ նախորդ թուականին. առ նուազն 7 օր միջոց գտնուելու է անոնց մէջ:

Որպէս զի 893ի Հրոտից 16ը դէթ աւագ չորեքշաբթի ըլլար, պէտք էր նոյն տարին Չատիկը Ապրիլ մէկին տօնուէր. այս սակայն անկարելի էր, որովհետեւ յաջորդ տարւոյն Չատիկը Մարտ 31 էր:

2. 893ի մէջ Հրոտից 16ը Մարտ 28ին էր, մինչ յուլիական եւ հ.կ. Չատիկը Ապրիլ 8ին. կը հետեւի թէ ան աւագ շաբթուն մէջ չէր:

Այս շրջաններուս Հր. 16ը աւագ շաբթուն մէջ կու գայ բացի ՅՈՒՄ-էն՝ ՅՈՒՄ-ին եւ ՅՈՒՄ-ին. իսկ աւագ հինգշաբթի է բաց ի ՅՈՒՄ-էն՝ ՅՈՒՄ-ին եւ ՅՄՁ-ին:

Տեսնելէ վերջ Ստեփանոսի ճշգրտութիւնը եւ Հ. Հացունիի հակասական հիմք, այժմ ակնարկ մը եւս սխալ հիմի վրայ Բզմ.ի մէջ եղած հաշիւներու սխալներուն.

ա. Իրականին՝ ինչպէս տեսանք, ՅՄԱ.ի Արաց 28 շաբաթ, իսկ Արեղ 6 երեքշաբթի կու գան:

Սխալ հիմի վրայ յեցած, Հ. Հացունի պէտք էր գտնել Արաց 28՝ կիր. Արեղ 6՝ դշ. սակայն գտած է՝ գշ. եւ ուրբաթ:

Իրականութեան չհամապատասխանող 893ի 16 Հրոտից հինգշաբթիէն եթէ մեկնինք՝ կը հասնինք 902ի մէջ եկող Հրոտից 16ին — որ ՅՄ տարւոյն վերջնիթեր ամսոյն մէջ կու գայ — շաբաթ օր մը: Այս շաբաթէն ՅՄԱ.ի Արաց 28ը՝ կան 28 եօթնեակ եւ 1 օր, ո՛չ թէ 27 եօթնեակ եւ 3 օր (14 օր Հրոտից + 5 Աւելաց + 150 [30 × 5. Նաւ. Հոտի, Սահմի, Տրէ, Քաղոց] + 28 Արաց = 197): Այդ 1 օրը կը տանի զմեզ կիրակի. Արացէն անցնելով Արեղ 6ին — 3 տարբերակով — կը գտնենք չորեքշաբթի:

բ. Իսկ «Պարոնին (Ազոնցի) փառաբան ՅՄԱ. (862) թուականին» անցած ժամանակ երբ կը համեմատուի Ստեփանոսի 893ը՝ 862ի դարձեալ հակասական թուական մը կը գործածուի: ՅՄԱ. տարւոյն Հրոտիցը 863ի մէջ կու գայ, իսկ եթէ 862ի մէջ զայն փնտաւելու կ'ըլենք, այն ատեն իր տարեմուտէն առաջ սկսող տարիի մը ամիսը փնտաւած կ'ըլլանք: Պրոֆ. Ազոնցի հաշիւները կը կատարուին 862ի Ապրիլէն յառաջ զէպ ի ՅՄԱ.ի տարեմուտը (863, Ապրիլ 25), մինչ Հ. Հացունիիննրն ՅՄԱ.ի մէջ եւ զէպ ի ետ ՅՄԱ.ի տարեմուտը (861, Ապր. 25):

գ. Այս վերջին հաշիւներուն մէջ Հ. Հացունի կը գրէ «Արդ՝ Հրոտից 16ի որոշ շաբաթէն...» ո՛ր շաբաթէն. քանի խօսքը 893ի մասին է «այդ 862ի եւ Ստեփ.ի 893ի միջեւ...» զի 862 կանուխ է քան 893» ըսել է թէ Ստեփանոսի 893ի Հրոտիցէն: Ինչո՞ւ այս հաշիւներուն ընթացքին Ստեփանոսի Հրոտից 16ը կ'ըսուի որոշ շաբաթ, մինչ մինչեւ հիմայ ան լոկ հինգ. էր: Յարկելի յօդուածագիրը, եթէ որոշ դիտաւորութեամբ չէ ըրած այս փոփոխութիւնը — զոր չենք կարծեր — անշուշտ անուշադրութեամբ քիչ առաջ յիշուած ՅՄԱ.ի Հրոտից 16ի շաբաթն ստած է իրր հիմ. այս ակամայ փոփոխութեան համար է որ 862ի մէջ Արաց 28՝ դշ. եւ Արեղ 6՝ շաբաթ կու գան: Եթէ փոխանակ որոշ շաբաթ-ի՝ հինգշաբթի անուէր, երկու օր աւելի առաջ պիտի գային անոնք, այդ է՝ բշ. եւ եւ., որոնք սակայն դարձեալ Պրոֆ.ի մասնանշած օրերը պիտի ըլլային, քանի որ

Ուս.ին գտած օրերը 862 տարւոյն Հոկտ. 19ին եւ Նոյ. 26ին կը հանդիպին, մինչ Հ. Հացունիի օրերը պիտի գային 861 տարւոյն Հոկտ. 19ին եւ Նոյ. 26ին, որոնք իրականին ո՛չ թէ բշ. եւ եւ. են, այլ կիրակի եւ չորեքշաբթի:

Այսչափ Բզմ.ի հաշիւներուն մասին, որոնք փորձեցինք սրբազրել մենք եւս իրական եւ չօրհանողական հաշիւներով:

* * *

Հ. Վ. Հացունի 1911ի Բագմովէպի մէջ կը գրէր «1 յիշ. (= ՆԼՁ թերթ — ՅՄԱ. թ. — Արաց ԻԸ Բ — Արեղ Զ Ե) մէջ ադոր (ծային) ստորին մասը կը նմանի ճիշդ Չ.ին. պոչը ձախէն յայ կ'իջնէ, եւ կը վերջանայ տողին վրայ» (էջ 133): Դարձեալ 1939ին «Հուսկ՝ թուականիդ Ծ.ին մեյանը թէպէտ մասամբ ջնջուած...»: Արդ քանի որոշ չի տեսնուիր «երկայնոտն» Ծան եւ մանաւանդ որ Չ.ի կը նմանի, փորձենք ՅՄԱ.ը՝ ՅՁԱ.ի սրբազրել. այս սրբազրութեան պիտի նպաստեն նաև՝ ա) պատմութիւնը եւ բ) յիշատակարանին Բ.ը եւ Ե.ը:

ա) Պատմութեան համաձայն Գաղիկ Արծրունի կը թաղաւորէր 908—936/37. ՄԼբէ կրնար այս շրջաններուս, իրր թաղուհի՛ Ս. Աստուածածնի եկեղեցին կառուցանել, ինչպէս նաև գրել տալ աւետարան մը ու նուիրել Վարդայ վանքին:

Պատմութիւնն է դարձեալ որ կը վկայէ թէ Յուսուի ոստիկանի օրով, Գաղիկ՝ միաբանած թշնամոյն հետ, կը քալէ Սմբատի վրայ ամէն տեղ մահ սիրելով: Հայաստան քար ու քանդ է: Լոկ քանական թուականներուն Գաղիկ զղջացած իր հայրենադաւ ընթացքին վրայ, ոստիկանին զէմ թշնամական զիրք կը բռնէ, մինչ Յուսուի իր արշաւանքները կը շարունակէ: Մինչեւ այս թուականներուս, երբ (հակառակաթոռ) հայ թաղաւորը հայ երկիրը ոտնակոխ ընել չի վարանիր, երբ թշնամի բանակներ աւերի կը մատնեն չէն ու աւան, երբ սով ու սրածութիւն կը տիրէ Հայաստանի մէջ՝ զժուար թէ չինարարութիւններու ետեւէ եղած ըլլայ ժողովուրդը եւ կամ արքունիքը:

Վերջապէս Նըսր ոստիկանի եւ Հայոց Արաս թաղաւորի օրով խաղաղութիւնը կը վերահաստատուի: Այս 930ական թուերուն համար է որ Չամչեան կը գրէ «Բագում կրօնաւորը, որք թողեալ զվանորայս իւրեանց՝



փախուցեալ էին յերեսաց ասպատակաց յայլեւայլ աշխարհս, լուեալ զանգորութենէ աշխարհին՝ դարձան յետս ի հայս. եւ վայելչացուցին զվանորայնս, զորս աղարտեալ էին հէնք. ոմանք եւս նորոգ շինեցին զայլ մեծամեծ մենաստանս» (Պատմ. Հայոց, Բ., էջ 823) :

Գաղիկ թագաւորի կենդանութեան այս օրերուն հաւանական կրնայ համարուել, որ Մլքէ շինած ըլլայ Ս. Աստուածածինը եւ գրել տալով աւետարան մը նուիրած ըլլայ զայն: Նուիրման թուականն ալ, որ երկրորդ յիշատակագրին մէջ ՇԺԵ թուին տակ գրուած է, մեր խնդրին դժուարութիւն չի կրնար յարուցանել, որովհետեւ այդ թուականը ինքնին շատ խնդրական է: 1902ի «Ձարդանկարք աւետարանին Մլքէ թագուհոյն» գործին մէջ գրուած է անոր մասին՝ «Ի՞նչ թուականը քերթուած է եւ տգէտի ձեռքով գրուած ՇԺԵ (1066) սեւ եւ նոր թանաքով, սակայն նախորդ թուականի մնացեալ հետքէն կրնանք ճշդել զայն. առաջին գիրը, տարակոյս չկայ թէ Յ պիտի ըլլայ. երկրորդ գիրը Կ է ինչպէս կը տեսնուի, իսկ երրորդը աւելի Ա.ի մօտ է եւ կ'ըլլայ ՅԿԱ. = 912» (էջ 8, ծանօթ. 2) :

Մխիթարեան Հայրերը սակայն շատ տարածայն են այդ թուին շուրջ եւ իրաւացիօրէն, որովհետեւ ան դժուարինթեանի է՝ քերուած, ինչպէս նաեւ նոր թուականով ծածկուած ըլլալուն համար:

բ) Ըսենք թէ ինչո՞ւ Բ եւ Ե՝ ՅԾԱ.ի սրբազրութեան կը նպաստեն:

Հաւանական է որ Բ եւ Ե՝ բշ. եւ եշ. նշանակեն եւ ոչ թէ ժամ:

ՅԾԱ.ին անոնք երկուշարթի՞ եւ հինգշարթի չէին զար, մինչ ՅԶԱ.ին՝ այո՞՞:

Կը հետեւի թէ անոնք ՅԶԱ.ի՞ իբր գրութեան թուականի, աւելի կը նպաստեն քան ՅԾԱ.ին:

Բ եւ Ե հաւանօրէն բշ. եւ եշ. կը նշանակեն, նախ՝ որովհետեւ կարծենք շատ ուղիղ պիտի չըլլայ հաստատել թէ գրիչը մինչ այրուբնի տառերով ժամ ուղած է նշանակել, ահամայ նշանակած է ճիշդ այդ այրուբններուն համապատասխանող եօթնեակի օրեր՝ որոնք երկու հեռուոր ամսաթիւերու՝ Արաց ԻԼ.ին եւ Արեգ Զ.ին, ստուգիւ իրենց նշանակած օրերուն հանդիպէին: Բայց կայ

³ ՅԾԱ. Հրոտից 165ն մինչեւ ՅԶԱ. Հրոտից 16 կայ 1564 եօթնեակ + 2 օր. ըստ այսմ վերջինս կու գայ բշ. այս օրէս ետ երթալով Արեգ 6ին — 4 տարբերակով — կը գտնենք եշ. եւ սպա Արաց 28՝ բշ.:

աւելին. ի՞նչպէս կարելի է բացատրել — ընդունելով որ գրիչը Բ եւ Ե գրած ժամանակ չէ ուղած մատնանշել օր — այն հարկադրական կատր, որ կայ Բ.ի եւ Ե.ի միջեւ: Ամէն անգամ երբ առաջինը երկուշարթի է, երկրորդը միայն հինգշարթի կրնայ ըլլալ. ամէն անգամ որ Արացի Բ.ը՝ երկուշարթի է, ոչ մէկ թուականի Արեգի Ե.ը բացի հինգշարթիէն՝ կրնայ եօթնեակի մնացեալ օրերէն մին նշանակել: Լոկ պատահարով մեկնել կամ պատահարի վերադրել այս՝ կարծենք քիչ մը շատ է:-

Կայ բայց դեռ շատ աւելին. Հ. Հացունի կը գրէ «հին գրչաց քով անսովոր է օրերուն անուանքը նշանակել այրուբնի գրերով, որոնք իբրեւ թուանշան կը գործածուին ընդհանրապէս. եւ երկրորդ՝ ուրիշ շատ գրիչներ եւս սովորութիւն ունէին յիշելու ժամերը, եւ անոնց կարգին Մաշտոցի նոյն աշակերտն ալ, որ իւր գրութեան աւարտը կը գնէ «ի վեցերորդ ժամու»,»:

Թէ հին գրիչները սովոր էին լոկ այրուբնի գրերով օրերու անունները նշանակել յայտնի կը տեսնուի հնագրեան ձեռագիր աւետարաններէն, որոնց լուսանցքին վրայ գտնուած Ա., Բ., Գ. . . է, գրերը կը մատնանշեն կտորներ որոնք պէտք էին կարգացուիլ իրենց նշանակած օրերուն, այդ է՝ կիրակի, երկուշարթի, երեքշարթի եւն. շարթ: Երկրորդ, արդեօք այդ «ուրիշ շատ գրիչներ» որոնք սովորութիւն ունէին յիշելու ժամերը, լոկ այրուբնի գրերով՝ կը նշանակէին զանոնք. անշուշտ ո՛չ — ինչպէս քերուած օրինակէն կ'երեւայ «ի վեցերորդ ժամու» — իսկ քանի ոչ, անտեղի է այս սովորութիւնը, հին գրիչներու լոկ այրուբնի գրերով՝ օրերու անունները նշանակելու «չունեցած» սովորութեան հակադրել: Երրորդ, եթէ ճիշդ է թէ «շատ գրիչներ» սովորութիւն ունէին յիշելու ժամերը, — ո՛չ լոկ այրուբնի գրերով —, ստուգիւ շատ աւելի ճիշդ է ըսել թէ անհամեմատօրէն շատ աւելի գրիչներ սովոր էին յիշել օրերը, եւ անոնց կարգին Մաշտոցի նոյն աշակերտն ալ, որ իր յիշատակարանին մէջ «ի վեցերորդ ժամուն» գրելէ առաջ «ի մեծի հինգշարթի» կը գրէ:

Մեր քննած հինգ հազար յիշատակագրութիւնները հետեւեալ արդիւնքը տուին:

Քիչ են ընդհանրապէս օր յիշող գրիչները, գրեթէ ոչինչ է սակայն անոնց թիւը՝

որոնք ժամ ալ կը նշանակեն⁴: Չափազանց ցանցատ դէպքերու, եւ այն՝ ժէ—ժԼ դարու մէջ գրուած դտանք ժամ՝ առանց կանխապէս օր նշանակած ըլլալու:

Օրերը կը մատնանշուին կա՛մ իրենց անունով, կամ օրերու համապատասխանող այրուբններու քով «շարթի», վերջին դարերուս նաեւ «չ» աւելցնելով (շարթ եւ կիրակի այս ձեւով բնաւ չգտանք. ուրրաթ = զ շարթի՝ քիչ անգամ): Ժամերն ալ նման կերպով: Երրորդ, վեցերորդ եւ իններորդ ժամերն են որ ընդհանրապէս կը յիշատակուին:

5000 յիշատակագրութիւններու այս արդիւնքը տեսնել վերջ՝ աներկայ կարելի է ընդունել, թէ խնդրոյ նիւթ յիշատակագրութեան մէջ եւս գրիչը՝ Բ եւ Ե տառերով՝ լակոնական ոճով — աւետարաններու լուսանցագրութիւններու ոճով — օր նշանակել ուղած է: Հին մատենագիրը ամսաթուերու քով անդրադոյն բան մը նշանակել ուղած միջոցին, ուղած է եօթնեակի օր նշանակել:

Լակոնական յիշատակարանին Բ. եւ Ե.ը պահանջք մ'ունին, այդ է՝ այնպիսի բուականի մը գրուած ընդունելու է Մլքէի աւետարանը, որուն մէջ Արաց 28 եւ Արեգ 6 ստուգիւ երկուշարթի եւ հինգշարթի ըլլալու են:

* * *

⁴ Ընդ մէկը շուրջ 200 յիշատակարան կը յիշեն տարթիւնք եւ ամսաթիւնք զատ նաեւ օր, իսկ միայն տասնեակ մը յիշատակարան օրէն զատ նաեւ ժամ: Ձեռագիրներու ցուցակներէն քաղելով կը գտնենք հոս հին դարերու սակաւաթիւ օրինակներէն.

- ՊԻԹ Օգ. ԺԵ շորեք. (Սարգսեան, Յուց. Ձեռ. Թ. 298):
- ՉՉՉ Հուսի ԻԵ շորեք. (Տաշեան, Յուց. Ձեռ. Մխիթ. Ի Վիեննա, էջ 75):
- ՉՉԵ Դեկտ. ԻԹ կիրակի (Լալայեան, Յուց. Ձեռ. Վասպուրականի, Ա., էջ 184):
- ՉԿԹ Յունիս Զ զարթի (Tisserant, Cod. Arm. Bybl. Vaticanae, էջ 353):
- ՉԿԼ Յունիս Ա ուրրաթ (Տաշեան, Յուց. Ձեռ. Մխիթ. Ի Վիեննա, էջ 885):
- ՉԾԲ Արաց ԻԳ շարթ (Լալայեան, Յուց. Ձեռ. Վասպ., Ա., էջ 63):
- ՉԾԱ Փետ. ԺԱ կիրակի (Tisserant, Cod. Arm. Bybl. Vaticanae, էջ 352):
- ՉԾ Սեպտ. Է Էշար. (Tisserant, Cod. Arm. Bybl. Vaticanae, էջ 352):
- ՉԾԼ Մարտ ԻԵ գշ. (Tisserant, Cod. Arm. Bybl. Vaticanae, էջ 352):
- ՉԻ շորեք. (Սարգսեան, Յուց. Ձեռ. Թ. 212):
- ՈՉԹ Օգ. ԻԵ կիրակի (Միրսէեան, Յուց. Ձեռ. Հալեպի Ա. Գառաւուն եւն. Ա., էջ 353):
- ՈՉԳ Օգ. ԺԳ շորեք. (Արաց 1888, էջ 48):
- ՅԻԳ Չուր Զ հինգ. (Թովմ. Արժրուի, Պատմ., էջ 217. Գուհասեան Թիֆլիս):

Եղրակացնելով՝ Բաղձավայրի հաշիւներն, որոնք Հ. Հացունիի հետեւութեան մեծադոյն փաստերն են, սրբազրուած կը մնան: Գալով ՅԶԱ.ին, որուն կողմն են թէ՛ պատմութիւնը — աւելի քան ՅԾԱ.ին — թէ՛ մատնանշող լակոնական յիշատակարանի մանր մասերը եւ հնագրութիւնը — շատ աւելի քան ՅԾԱ.ին — կ'առաջարկենք իբր Մլքէի աւետարանին գրութեան ստոյգ թուականը համարել, քանի այս սրբազրութեան կը նպաստեն նաեւ խնդրոյ նիւթ կողմ Ծան՝ որ իրականին որոշ տեսանելի չէ եւ 1911ի Բղձ.ի վկայութիւնը թէ՛ «աղոր (անորոշ Ծ.ի) ստորին մասը կը նմանի Բիշդ Զ.ին. պոչը աստիճան յաջ կ'իջնէ, եւ կը վերջանայ տողին վրայ»:

* * *

ՅՈՒՆՈՒԱՐ ՀԱՅԵՐԵՆ ԶԵՌԱԳՐԵՑ Ի ԲՈՒԼՊԵՐԵՐԸ
(Շարունակութիւն):

35.

ՄԱՇՏՈՑ

Ի ՊԼՈՎԴԻԻ

Թուրքիոյ՝ 207: — Մեծնիսիոյ՝ 21 × 16: — Գրութիւն՝ երկսիւն, 18 × 11 եւ 19 × 13՝ խառն: Երբին լուսանցք 1 × 1½ սմ.: — ՏՈՎ.Բ՝ 20: — Նիւթ՝ բուրբ հաստ եւ ոգորկ, դեղնադեղ: — ԿԱՁՄ՝ կաշեպատ-փայտեայ, արեւելեան, ամուր: Առաջին կողմին վրայ 13 սմ. դրամագծով արծաթեայ շքանակի մէջ առնուած է խաչ մը, կարմիր ու կապոյտ քարէ չնքս բեւեռներով, մէջտեղը՝ փոքրագիր խաչկապիւն: Փակամէքն ինկած: Կազմին ներք՝ սպիտակ բուրբ, նաեւ գոյգ մը յաւելուածական սպիտակ բարբը՝ սկիզբն ու վերջը: — ՄԱԳԱՎԱԹԵԱՅ ՊԱՉՊԱՆԱԿ՝ չունի: — ՀԱՆԳԱՄԱՆԻՆ՝ ոչ այնքան լաւ: Սկիզբն կը պակսի քանի մը բարբը, հաւանաբար եւ յիշատակարանը՝ վերջէն: Գործածութեան հետեւեալ մասում են բարբերու ստորին անկիւնները՝ մինչեւ բգ. 20: Կան նաեւ խոնարհեմ եւ ցեցակիւրեմ վեցսուած բարբեր: վերակազմութեան ընթացքին տեղ տեղ կորստուած են գրութեան վերի տողերը: — ԳԻԻ՝ բարբեր, խոշոր, ոչ միօրինակ մինչեւ վերջ: — ՍԿՁԲՆԱԳԻՐԻՐ՝ կարմիր մեղմով, սովորական: — ՉԱՐԳԱԳԻՐԻՐ, ՉԱՐԳԱՆԿԱՐԻ, ԵԿԱՐԻ Եւրոպ. չունի: — ԳԱՏԱՐԻ՝ բգ. 1բ, 48բ, 207: — ԺԱՄԱՆԱԿ՝ ամուր, իբր ԺԵ—ԺԶ. դար: — ՏԵՎ.Ի՝ անմագօր: —